

«ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ

ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ  
ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ (ՍԹԱ)  
ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ  
Գլխավոր տնօրեն՝



Դ. ՈՒՇԿՈՎ

Երևան - 2017թ.

## ԱՆՈՏԱՑԻԱ

Մթնոլորտ սահմանային թույլատրելի արտանետումների (ՄԹԱ) նախագիծը մշակված է «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի համար: Նախագիծը մշակված է համաձայն [1, 2, 3]:

Աշխատանքի նպատակն է՝ մթնոլորտի աղտոտվածության մակարդակների և սահմանային թույլատրելի արտանետումների որոշումը: ՄԹԱ նորմատիվների նախագծի մշակումը կատարվում է շրջակա միջավայրի վրա կազմակերպությունների գործունեության վնասակար ազդեցությունը սահմանափակելու նպատակով:

Կոմբինատի հզորությունն ըստ վերամշակվող, ոսկի պարունակող բազմամետաղային հանքաքարը կազմում է 600000 տ/տարի:

Կոմբինատում օգտագործվող հիմնական նյութերի ծախսը, տ/տարի՝

- Պայթուցիկ նյութեր - 900.0
- Դիզելային վառելիք - 1060
- Կիր - 2700
- Նատրիումի սուլֆիդ - 36
- Բուրիլ քսանթազենետ - 23.4
- Հեղուկ ապակի - 5.4
- Կալցիումի կարբիդ - 100 կգ/տարի,
- Էլեկտրոդներ - 2357 կգ/տարի:
- Բնական գազ - 70000 մ<sup>3</sup>/տարի

Աշխատանքում իմի են բերվել կազմակերպության՝ մթնոլորտն աղտոտող աղբյուրների արտանետումների որակական և քանակական բնութագրերը:

Կազմակերպության փաստացի արտանետումների ցուցանիշների հիման վրա հաշվարկվել է «օդի պահանջվող օգտագործումը» (ՕՊՕ - օդի ծավալը, որն անհրաժեշտ է աղտոտող նյութերի արտանետումների՝ մինչև սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի (ՄԹԿ) արժեքը նոսրացման համար (տես հավելված 1), որի արդյունքում պարզվել է, որ կազմակերպության համար օդի պահանջվող օգտագործումը վայրկյանական կտրվածքով կազմում է 13.6 հազ. մ<sup>3</sup>/վրկ [1], ուստի արտանետման չափաքանակները սահմանվում են ՄԹԱ նախագծի հիման վրա:

Քանի որ կոմբինատի արտադրամասերը գտնվում են միմյանցից բավականին հեռու, այդ իսկ պատճառով նախագծում դիտարկված է արտանետումների 3 արտադրական հրապարակ՝

- I արտադրահրապարակ, որն իր մեջ ներառում է Շահումյանի հանքի հյուսիսային տեղամասի N 6 հանքուղու հանքաբերանը և լցակույտը
- II արտադրահրապարակ, որն իր մեջ ներառում է հարստացուցիչ ֆաբրիկան, Շահումյանի հանքի հարավային տեղամասի N 9 հանքուղու հանքաբերանը
- III արտադրահրապարակ, որն իր մեջ ներառում է ընկերության նոր լաբորատորիան, որը գտնվում է Լենինի թաղամասում:

Աղտոտող նյութերի արտանետումների աղբյուրների ընդհանուր քանակը կազմում է 28, որոնցից 13-ը կազմակերպված են, 15-ը անկազմակերպ:

Կազմակերպության արտանետումները պարունակում են աղտոտող նյութերի 20 անվանում՝ հանքաքարի, կրի, փայտի, քսանթազենետի փոշիներ, ածխաջրածիններ, ազոտական, ծծմբական և աղաթթուների գոլորշիներ, մանգանի, երկաթի, ածխածնի, ազոտի օքսիդներ, ծծմբային անհիդրիդ, ֆտորիդներ, յուղի աերոզոլ:

Գումարային էֆեկտով օժտված են 11 վնասակար նյութեր՝ բոլոր փոշիները, թթուները, ֆտորիդները, ազոտի, ածխածնի օքսիդները, ծծմբային անհիդրիդը: Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկները կատարված են գործող մեթոդակարքի հետ համաձայն /1-5/:

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ցանկը բերված է աղյուսակ 1-ում: Մթնոլորտ արտանետվող նյութերի տարեկան քանակը կազմում է  $\approx 38.435$  տոննա, այդ թվում՝

- I արտադրահրապարակ - 25.84 տ;
- II արտադրահրապարակ - 10.56 տ;
- III արտադրահրապարակ - 2.035 տ;

Ջարկային արտանետումների բնութագիրը բերված է աղյուսակ 2-ում, որոնց քանակը կազմում է 16.205 տ/տարի: Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի պարամետրերը և քանակները ՄԹԱ-ի հաշվարկների համար բերված են աղյուսակ 3-ում:

Վնասակար նյութերի մթնոլորտ արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցված տնտեսական վնասը գնահատվում է տարեկան 5.067 մլն.դրամ [4] (հավելված 2):

Կատարված է մթնոլորտն աղտոտող արտանետումների ցրման հաշվարկ համակարգչային «Ռադուգա» ծրագրով:

Հաշվարկի արդյունքում հաստատված է, որ մթնոլորտն աղտոտող նյութերի մերձգետնյա կոնցենտրացիաները մոտակա Շահումյան, Բարաբաթում գյուղերում և Կապան քաղաքում գտնվում են բնակելի գոտու համար սահմանված նորմերում:

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի բոլոր արտանետումները հանձնարարվում են որպես 2017թ. սահմանային թույլատրելի արտանետումներ: ՍԹԱ նորմատիվներին հասնելու ժամանակը համարվում է հաստատման պահից:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆՈՏԱՅԻԱ .....	2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	6
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .....	8
2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂՆ ԱՂՏՈՏՈՂ ԱՂԲՅՈՒՐ.....	9
3. ՍԹԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԵԼՔԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ .....	29
4. ՄԹՆՈԼՈՐՏԻ ՄԵՐՁԳԵՏՆՅԱ ՇԵՐՏՈՒՄ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՑՐՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ .....	29
4.1. Ելակետային տվյալներ .....	29
4.2. Մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը .....	30
4.3. Հաշվարկի բնութագիրը .....	31
5. ՍԹԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ, ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԸ .....	33
6. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ .....	34
7. ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ .....	35
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	36
ՀԱՎԵԼՎԱԾ .....	38
1. «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի ՕՊՕ-ի հաշվարկ	
2. «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեությունից արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցվելիք տնտեսական վնասի հաշվարկ	
3. Շահումյանի հանքի քարտեզ-սխեման մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներով	
4. Հարստացման ֆաբրիկայի գլխավոր հատակագիծը մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներով	
5. Լաբորատորիայի քարտեզ-սխեման մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներով	
6. Տեղանքի ռելիեֆի գործակցի հաշվարկ	
7. ՀՀ Բնապահպանության նախարարություն «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» Հայէկոմոնիտորինգ: Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները	
8. Մերձգետնյա կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները	
9. Մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկները	

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի մթնոլորտ արտանետումների սահմանային-թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծը մշակված է ՀՀ Բնապահպանության օրենսդրության գործող նորմերի և նորմատիվ ակտերի պահանջների համաձայն:

Սահմանային թույլատրելի արտանետումների նորմավորման աշխատանքների կատարման համար հիմք է հանդիսացել «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և ՀՀ Կառավարության 1999թ. մարտի 30-ի N192 և օգոստոսի 21-ի N953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N1673-Ն որոշումը:

- ОНД 1-84; Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям.
- ОНД 1-86; Методика расчета концентраций в атмосферном воздухе вредных веществ содержащихся в выбросах предприятий. Ленинград. Гидрометеиздат 1987г.
- ГОСТ 17.2.3.02-78 Охрана природы. Атмосфера. Правила установления допустимых выбросов вредных веществ промышленными предприятиями. М. Издательство стандартов 1979г.
- Рекомендации по оформлению и содержанию проекта нормативов предельно-допустимых выбросов в атмосферу (ПДВ) для предприятия. Москва. Госкомитет СССР по охране природы. 1990г.

ՄԹԱ-ի նախագիծը հանդիսանում է գիտա-տեխնիկական նորմատիվ հաստատված մթնոլորտն աղտոտող յուրաքանչյուր կոնկրետ աղբյուրի համար՝ պայմանով, որ այդ և բնակավայրի բոլոր աղբյուրների համախմբից մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի արտանետումները՝ հաշվի առած մթնոլորտում դրանց փոխարկումը և ցրումը, ինչպես նաև կազմակարպությունների զարգացման հեռանկարները, չեն ստեղծի սահմանված նորմատիվային արժեքները գերազանցող մերձգետնյա կոնցենտրացիաներ:

Աղտոտող նյութերի արտանետումների նորմատիվը որոշվում է որպես աղտոտող նյութի առավելագույն քանակ.

- յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար (գ/վրկ) որոշված տեխնոլոգիական սարքավորումների առավելագույն բեռնվածության դեպքում՝ հաշվառված նշված ռեժիմի վրա աշխատանքների ժամանակի 20 րոպեական միջակայքում միջինացումը:
- որը կարող է մթնոլորտ արտանետվել արտանետումների որոշակի աղբյուրներից տարվա ընթացքում (տ/տարի)՝ որոշված որպես արտանետումների աղբյուրներից աղտոտող նյութերի արտանետումների միջին արժեքների (գ/վրկ) և տեխնոլոգիական սարքավորումների տարեկան աշխատաժամերի արտադրյալ:
- որը կարող է մթնոլորտ արտանետվել հաստատուն աղբյուրների համախմբումից տարվա ընթացքում՝ որոշված որպես աղտոտող նյութերի առավելագույն արտանետումների գումար (գ/վրկ) և տարեկան արտանետումների գումար (տ/տարի):

Այս աշխատանքի նպատակն է՝ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի սահմանային թույլատրելի արտանետումների որոշումը և մթնոլորտի աղտոտվածության մակարդակի գնահատումը:

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## ՄԱՍԻՆ

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ն գտնվում է Սյունիքի մարզում, Կապան քաղաքի բնակելի տարածքներից 1.5-2.0 կմ հեռավորության վրա: «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի իրավաբանական հասցեն է՝ 3301, ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Գործարանային 4:

Կոմբինատի հիմնական մայրուղին հանդիսանում է Երևան-Կապան ավտոճանապարհը:

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ն տեղակայված է 3 արտադրական հրապարակների վրա՝

- 1-ին արտադրական հրապարակ Շահումյանի հանքի հյուսիսային տեղամաս N6 հանքուղի, լցակույտ, Կապան քաղաքից 2կմ արևելք

- 2-րդ արտադրական հրապարակ Կապանի հարստացուման ֆաբրիկա, Շահումյանի հանքի հարավային տեղամաս N9 հանքուղի, Կապան քաղաքի բնակելի գոտուց 1.5-2կմ հեռավորության վրա

- 3-րդ արտադրական հրապարակ - լաբորատորիա, հարստացման ֆաբրիկայից 4.5կմ հեռու, ք. Կապանից 1.5կմ, Լենինի թաղամաս:

Արտհրապարակների գլխավոր հատակագծերը մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներով բերված են 3,4,5 հավելվածներում:

Ընկերությունը նախատեսում է վերամշակել 600 հազ. տոննա հանքաքար Շահումյանի բազմամետաղային հանքի հյուսիսային տեղամասից – 244 հազ. տոննա, հարավային տեղամասից 356հազ. տոննա:

Շահումյանի բազմամետաղային հանքավայրը գտնվում է ՀՀ Հարավ-Արևելյան մասում, Սյունիքի մարզի Կապանի շրջանում, Կապան քաղաքից 2 կմ դեպի արևելք:

Տեղանքի կլիման բնութագրվում է չափավոր տաք ամառով և հարաբերական մեղմ ձմեռով:

Պետական ռեգիստրի գրանցման համարը և ամսաթիվը՝ 27.120.01216: 2004-07-16:

Ընկերության պետական ռեգիստրի վկայականի համարը՝ 03Ա1064282:



## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՐՆ ԱՂՏՈՏՈՂ ԱՂԲՅՈՒՐ

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի բոլոր երեք արտադրական հրապարակները հանդիսանում են մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներ:

Արտադրության գործընթացում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը հիմնականում առաջանում են հետևյալ գործընթացներից.

- Շահումյանի հանքավայրից հանքաքարի արդյուհանման և տեղափոխման ժամանակ
- հանքաքարի հարստացման ժամանակ
- լաբորատոր աշխատանքների ընթացքում

Արտանետումների աղբյուրների մասին տեղեկությունները բերված են արտադրահրապարակների նկարագրման մեջ:

Կոմբինատում օգտագործվող հիմնական նյութերի ծախսը, տ/տարի՝

- Պայթուցիկ նյութեր - 900.0
- Դիզելային վառելիք - 1060
- Կիր - 2700
- Նատրիումի սուլֆիդ - 36
- Բուրիլ քսանթազենատ - 23.4
- Հեղուկ ապակի - 5.4
- Կալցիումի կարբիդ - 100կգ/տարի
- Էլեկտրոդներ - 2357 կգ/տարի

Ընկերության երեք արտադրահրապարակներից (Ա/Հ) հիմնականում մթնոլորտ է արտանետվում հանքաքարի փոշի, անօրգանական փոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, ածխաջրածիններ, մուր, ծծմբային անհիդրիդ, բենզ(ա)պիրեն և այլն:

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ցանկը բերված է աղյուսակ 1-ում:

Ա/Հ-1 Շահումյանի հանքի հյուսիսային տեղամասի N6 հանքուղու հանքաբերան, լցակույտ:

N1 արտադրահրապարակի վրա գտնվում են Շահումյանի բազմամետաղային ստորգետնյա հանքի հյուսիսային տեղամասի N6 հանքուղու հանքաբերանը և լցակույտը: Հանքավայրի արտադրական հզորությունը կազմում է 244 հազ.տ/տարի:

N1 արտադրահրապարակը (Ա/Հ) գտնվում է Կապան քաղաքից 2-3 կմ հեռավորության վրա, Շահումյան ավանից 1.3կմ վրա:

Ա/Հ-ում իրականացվում է բազմամետաղային հանքանյութի արդյունահանում փակ եղանակով և տեղափոխում հարստացուցիչ ֆաբրիկա: Իրականացվում է նաև դատարկ ապարների տեղափոխում լցակույտ:

Ստորգետնյա հանքում կատարվում են հորատման, պայթեցման և հանքաքարի հանման-բեռնման աշխատանքներ:

Հորատման գործընթացի և լեռնային տեխնիկայի աշխատանքների ժամանակ առաջանում են հանքաքարի փոշու և ծխազագերի արտանետումներ, որոնք մթնոլորտ են արտանետվում օդափոխության համակարգով և մասամբ հանքուղու հանքաբերանից: Ծխազագերի նվազեցման նպատակով հանքային տեխնիկան օժտված է կատալիտիկ չեզոքարարներով, ինչը նպաստում է ծխազագերի 90% կլանմանը (աղբյուր B1, B2):

Հանքաքարը հարստացման ֆաբրիկա և դատարկ ապարների լցակույտ տեղափոխման գործընթացում, ավտոտրանսպորտի տեղաշարժի ժամանակ մթնոլորտ է արտանետվում փոշի, որն առաջանում է անվադողերի և ճանապարհի ծածկի շփման և թափքերից փչման ու թափման հետևանքով (աղբյուր B3, B4):

Դատարկ ապարները լցակույտ բեռնաթափման և ծանր տեխնիկայի աշխատանքների ժամանակ առաջանում են փոշու և ծխազագերի արտանետումներ: Փոշու արտանետման աղբյուր է հանդիսանում նաև լցակույտի մակերեսը (աղբյուր B5):

Վնասակար արտանետումների քանակական բաղադրությունների հաշվարկը կատարվել է գործող մեթոդակարգերի համաձայն /5,6,7/:

Ա/Հ-ից մթնոլորտ արտանետվող աղբյուրների ցանկը բերված է 1 աղյուսակում:

Ա/Հ-1 - Մթնոլորտ արտանետվող աղբյուրների քանակը 5-ն է, որոնցից 1-ը կազմակերպված է: Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի թիվը 7-ն է: Արտանետումների քանակը կազմում է 25.84 տ/տարի:

Ա/Հ-2

N2 արտադրահրապարակը ներառում է Շահումյանի բազմամետաղային ստորգետնյա հանքի հարավային տեղամասի N9 հանքուղու հանքաբերանը և Կապանի հարստացման ֆաբրիկան:

Կապանի հարստացման ֆաբրիկան գտնվում է ՀՀ հարավ-արևելյան մասում, Սյունիքի մարզի Կապան քաղաքում, Ողջի գետի մոտավորապես միջին մասում, աջ ափին: Ֆաբրիկան կառուցված է Կապան քաղաքի հյուսիս-արևելյան մասում, ծովի մակերևույթից 800մ բարձրության վրա: Ֆաբրիկայի տարեկան արտադրողականությունը կազմում է 600հազ. տոննա:

N2 արտադրահրապարակը (Ա/Հ) գտնվում է՝

- Կապան քաղաքի բնակելի զանգվածից 1.5-2կմ հեռավորության վրա:
- Շահումյան ավանից 1-1.2կմ հեռավորության վրա:
- Բարաբաթում գյուղից 1-1.2կմ հեռավորության վրա:

Հարստացման ֆաբրիկայում իրականացվում են՝ հանքաքարի ջարդում, աղացում, ֆլոտացում, ստացված խտանյութի խտացում և ֆիլտրում:

Հանքաքարը ավտոտրանսպորտով տեղափոխվում է հարստացուցիչ ֆաբրիկա, որտեղ ենթարկվում է խոշոր, միջին և մանր ջարդման, աղացման և ֆլոտացման: Ֆլոտացման գործընթացում ստացված վերջնական խտանյութը խտացումից և գտումից հետո պահեստավորվում է և ուղղվում սպառողներին: Պատրաստի խտանյութերի խոնավությունը կազմում է 10-12%: Միաժամանակ ֆաբրիկայի արտհրապարակում գործում են մեխանիկական, կրակաթի պատրաստման, փայտամշակման, ռեազենտների պատրաստման օժանդակ արտադրամասեր: Շահումյանի հանքի հարավային տեղամասի 9-րդ հանքուղու հանքաբերանը դուրս է գալիս հարստացման ֆաբրիկայի արտհրապարակ և հանդիսանում է հանքափոշու և հանքուղում աշխատող տեխնիկայի ծխագազերի (աղբյուր B6) մթնոլորտ արտանետումների աղբյուր:

Հանքաքարը հանքուղիներից տեղափոխում են հանքաքարի պահեստ կամ ջարդման արտադրամասի ընդունիչ բունկեր: Հանքաքարի տեղափոխման և բեռնման-բեռնաթափման աշխատանքների ընթացքում գոյանում են հանքափոշու արտանետումներ (աղբյուր B7 և B8):

Հանքանյութը հաջորդաբար անցնում է երկփուլային ջարդում՝ խոշոր ջարդում այտային ջարդիչում, միջին և մանր ջարդում կոնային ջարդիչներում: Հանքաքարի ջարդման և մաղման գործընթացների հետևանքով առաջանում են հանքափոշու արտանետումներ, որոնք դուրս են բերվում արտածման (ասպիրացիոն) համակարգով: Արտածման օդը անցնում է СПГ-7-10, СПГ-7-20 մակնիշի փոշեռսիչ սարքերով, որոնց մաքրման աստիճանը (ՕԳԳ) կազմում է 95% (աղբյուր В9, В10): Ջարդված հանքաքարը ժապավենային փոխակրիչով տեղափոխվում է սիլոսային բունկեր, այնուհետև գնդավոր աղաց, (աղբյուր В11): Գնդավոր աղացում ջրային միջավայրում ձևավորվում է խյուս, որը այնուհետև ուղղվում է ֆլոտացման տեղամաս: Ֆլոտացման գործընթացում օգտագործվում են տարբեր ռեագենտներ՝ քսանթազենատ, նատրիումի սուլֆիդ, կրակաթ և այլն: Ֆլոտացման գործընթացում ստացված խտանյութերը թանձրեցվում են և զտում: Հարստացման գործընթացում զոյանում են քսանթազենատի գոլորշիների արտանետումներ, որոնք դուրս են բերվում ընդհանուր օդափոխության համակարգով (աղբյուր В17):

Օժանդակ արտադրամասերը նույնպես հանդիսանում են վնասակար նյութերի մթնոլորտ արտանետումների աղբյուր:

Կրակաթի պատրաստման արտադրամաս. Կիրը բեռնաթափվում է կրի պահեստ (աղբյուր В12), որտեղից էլևատորով տրվում է կրակաթի պատրաստման տեղամաս: Առաջացած կրի փոշին արտադրամասից դուրս է բերվում ընդհանուր օդափոխության համակարգով (աղբյուր В13):

Ռեագենտների պատրաստման արտադրամաս. Արտանետումների աղբյուր են հանդիսանում քսանթազենատի գուռերը (աղբյուր В14), որոնց համար նախատեսված է քսանթազենատի գոլորշիների տեղական արտածման և մաքրման համակարգ: Արտածված գազերի մաքրումը իրականացվում է է СПГ-7-5 շիթա փրփրային գազաորսիչների միջոցով: Քսանթազենատի և նատրիումի սուլֆիդի գուռերը բեռնման ընթացքում զոյանում են համապատասխան նյութերի փոշու արտանետումներ, որոնք դուրս են բերվում ընդհանուր օդափոխության համակարգով (աղբյուր В15, В16):

Մեխանիկական արտադրամաս-ձուլման բաժանմունք. Առկա են անօրգանական փոշու, ազոտի և ածխածնի օքսիդների արտանետումներ, որոնք

առաջանում են թուջի և պողպատի ձուլման գործընթացում էլեկտրաաղեղային վառարանում:

Դարբնոցի հնոց. Արտանետվում են բնական գազի այրման նյութերը՝ ազոտի և ածխածնի օքսիդները:

Ձուլման բաժանմունքի և դարբնոցի հնոցի արտանետումները դուրս են բերվում ծխնելույզներով (աղբյուր B18, B19):

Փայտամշակման արտադրամաս: Հանդիսանում է փայտափոշու արտանետման աղբյուր: Արտադրամասը տեղակայված է բաց հրապարակում: Արտադրամասում նախատեսված է փայտափոշու հիդրոճնշումը տեխնիկական ջրով (աղբյուր B20):

Մետաղների եռակցում և կտրման տեղամաս: էլեկտրական և գազային եռակցման աշխատանքների կատարման ժամանակ մթնոլորտ են արտանետվում վնասակար նյութեր (աղբյուր B21):

Վարչական մասնաշենքին կից աշխատող լաբորատորիայում քիմիական նյութերի և հանքափոշու արտանետումները դուրս են բերվում օդափոխության համակարգի միջոցով (աղբյուր B22):

Վառելիքաքսուկային նյութերի տարողություններից գոլորշիացման արդյունքում մթնոլորտ են արտանետվում ածխաջրածիններ և յուղի աերոզոլ (աղբյուր B23, B24, B25):

Վնասակար արտանետումների քանակական բաղադրությունների հաշվարկը կատարվել է գործող մեթոդակարգերի համաձայն /5÷11/:

Արտանետումների ցուցանիշները և աղբյուրների պարամետրերը ՄԹԱ հաշվարկի համար բերված են աղյուսակ 3-ում:

Ա/Հ-2 - Մթնոլորտ արտանետվող աղբյուրների քանակը 20-ն է, որոնցից 10-ը չկազմակերպված են: Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի թիվը 20-ն է: Արտանետումների քանակը կազմում է 10.56 տ/տարի:

Ա/Հ-3 - «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի կազմի մեջ է մտնում նաև հետազոտական լաբորատորիան, որը գտնվում է հարստացուցիչ ֆաբրիկայից 4.5 կմ հեռավորության վրա, իսկ քաղաքի մոտակա բնակելի շենքերից 1.5 կմ հեռավորության վրա:

Լաբորատորիան տեղակայված է 900 մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով երկհարկանի շենքում: Լաբորատորիայի շրջակա տարածքը բարեկարգված է և կանաչապատված:

Լաբորատորիան նախատեսված է սյունակային հորատման ժամանակ հորատանցքերից հանված կեռների հետազոտման, նմուշների պատրաստման, դասակարգման և անալիտիկ հետազոտությունների համար:

Լաբորատորիայի շահագործման ընթացքում մթնոլորտ արտանետվող աղբյուրներ են հանդիսանան նմուշների պատրաստման բաժնում տեղադրված այտավոր ջարդիչները, տրորման LM-2 և LM-5 մակնիշի սարքերը: Հարգորոշման բաժանմունքում բովախառնուրդի պատրաստման, նմուշների թթվային լիաեփման համար նախատեսված օդափոխիչ պահարանները, էլեկտրական վառարանները և թրծատուփերը տեղադրված են գլխանոցների տակ:

Հիգիենիկ նորմաների պահպանման նպատակով լաբորատորիայում նախատեսվում է ընդհանուր օդափոխության համակարգ:

Ա/Հ-3 - Մթնոլորտ արտանետվող աղբյուրների քանակը 3-ն է, բոլոր աղբյուրները կազմակերպված են: Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի թիվը 4-ն է: Արտանետումների քանակը կազմում է 2.035 տ/տարի, հաշվարկը կատարվել է գործող մեթոդակարգերի համաձայն /8,10/:

Ա/Հ-ներից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ցանկը բերված է 1 աղյուսակում:

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ 3 արտադրահրապարակից գումարային վնասակար նյութերի արտանետումները մթնոլորտ կազմում են 38.435 տ/տարի:

Գումարային հատկությամբ օժտված նյութերն են բոլոր թթուները, ազոտի, ածխածնի օքսիդները և ծծմբային անհիդրիդը:

**Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ցանկը**

Աղյուսակ 1

NN	Նյութերի անվանումը	ՄԹԿ, միանգամյա առավելագույն, մգ/մ <sup>3</sup>	Նյութերի արտանետումը, տ/տարի			
			Ա/Հ-1	Ա/Հ-2	Ա/Հ-3	Ընդ.
1	Հանքաքարի փոշի	0.3	15.277	4.603	1.94	21.82
2	Ածխածնի օքսիդ	5.0	5.14	2.279	-	7.419
3	Ածխաջրածիններ	1.5	1.545	0.517	-	2.062
4	Ազոտի օքսիդներ	0.2	2.05	0.772	-	2.822
5	Մուր	0.15	0.8	0.24	-	1.04
6	Ծծմբային անհիդրիդ	0.5	1.03	0.31	-	1.34
7	Բենզ(ա)պիրեն	0.000001	0.000039	0.00005	-	0.000089
8	Կրափոշի	0.3	-	0.595	-	0.595
9	Քսանթազենատի գոլորշիներ	0.1	-	0.112	-	0.112
10	Քսանթազենատի փոշի	0.1	-	0.045	-	0.045
11	Նատրիումի սուլֆիդի փոշի	0.2	-	0.009	-	0.009
12	Անօրգանական փոշի	0.5	-	0.53	-	0.53
13	Փայտափոշի	0.5	-	0.51	-	0.51
14	Մանգանի օքսիդներ	0.01	-	0.0022	-	0.0022
15	Ֆտորիդներ	0.02	-	0.0096	-	0.0096
16	Երկաթի օքսիդներ	0.04	-	0.025	-	0.025
17	Ծծմբական թթվի գոլորշիներ	0.3	-	82·10 <sup>-8</sup>	0.0198	0.0198
18	Աղաթթվի գոլորշիներ	0.2	-	77.8·10 <sup>-6</sup>	0.0436	0.0436
19	Ազոտական թթվի գոլորշիներ	0.4	-	25.9·10 <sup>-5</sup>	0.0316	0.0319
20	Յուղի աերոզոլ	0.05 (ՕԵՄԵ)	-	0.000132	-	0.000132
	<b>Ընդամենը</b>		25.84	10.56	2.035	38.435

**Զարկային արտանետումների բնութագիրը**

Շահումյանի անվան հանքի հյուսիսային և հարավային տեղամասերում կատարվում են պայթեցման աշխատանքներ: Պայթեցման ժամանակ տեղի են ունենում զարկային արտանետումներ: Փոշու և գազերի էմիսիայի տևողությունը պայթեցման աշխատանքների ժամանակ կազմում է 10-15 ր, այդ պատճառով նրանք համարվում են համազարկային և մթնոլորտի աղտոտման մակարդակի հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում: Պայթեցումները իրականացվում են ստորգետյա հանքում նախապես ստեղծվող ջրային մառախուղի պայմաններում: Համազարկային արտանետումների հաշվարկը կատարված է գործող մեթոդակարգի համաձայն /6/:

Զարկային արտանետումները բերված են աղյուսակ 2-ի տեսքով:

**Զարկային արտանետումներ ունեցող աղբյուրների թվարկումը և բնութագիրը**

Աղյուսակ 2

Արտադրամասի (տեղամասի) և աղբյուրների անվանումները	Նյութի անվանումը	Նյութի զարկային արտանետումը, գ/գարկ	Արտանետման պարբերականությունը, (անգամ/տարի)	Արտանետման տևողությունը, վրկ	Զարկային արտանետումների տարեկան քանակությունը, տ
1	2	3	4	5	6
Շահումյանի հանքի հյուսիսային տեղամաս: Պայթեցման աշխատանքներ	Հանքաքարի փոշի	189	1076	600	0.203
	Ագոտի օքսիդներ	833			0.895
	Ածխածնի օքսիդ	5105			5.48
Շահումյանի հանքի հարավային տեղամաս: Պայթեցման աշխատանքներ	Հանքաքարի փոշի	275	1080	600	0.297
	Ագոտի օքսիդներ	1212			1.31
	Ածխածնի օքսիդ	7420			8.02



Տեխնոլոգիական սարքավորումների քանակը, արտանետման աղբյուրների պարամետրերը, արտանետվող վնասակար նյութերի քանակը և տեսակը բերված են աղյուսակ 3-ում:

Մոտակա 5 տարիների ընթացքում կազմակերպության տեխնոլոգիական ծավալների փոփոխություններ չեն սպասվում, այդ պատճառով աղյուսակ 3-ում հեռանկար սյունակը չի լրացվում:

**ՄԹԱ նորմատիվների հաշվարկի համար աղտոտող նյութերի պարամետրերը**

Աղյուսակ 3

Արտադրություն արտադրամաս	Աղտոտող նյութերի առաջացման աղբյուրները			Աշխատաժամերի տարեկան քանակը		Արտանետման աղբյուրի անվանումը		Աղբյուրների քանակը		Աղբյուրի կարգաթիվը	
	անվանումը	քանակը		ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ
		3	4								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Ա/Հ-1											
1. Շահումյանի հանք	Հորատման հաստոցներ	4		7590		Օդափոխման համակարգ		1		B1	
	Հանքային տեխնիկա	2									
2. Շահումյանի հանքի հյուսիսային տեղամաս 2.1 Հանքուղի N6	Հանքային տեխնիկա	2		7590		Անկազմակերպ		1		B2	
	Բեռնման, բեռնաթափ- ման աշխատանքներ										
2.2 Հումքի տեղա- փոխում հարստա- ցուցիչ ֆաբրիկա	Ավտոինքնաթափ մեքենաներ	6		6360		Անկազմակերպ		1		B3	
3. Լցակույտ 3.1 Դատարկ ապարների տեղափոխում	Ավտոինքնաթափ մեքենաներ	6		6435		Անկազմակերպ		1		B4	
3.2 Դատարկ ապարների բեռնա- թափում: Լցակույտի մակերևույթից փոշիացում	Հանքային տեխնիկա	1		4400		Անկազմակերպ				B5	
	Ավտոինքնաթափ մեքենաներ	6									

3-րդ աղյուսակի շարունակությունը

Արտադրություն արտադրամաս	Աղտոտող նյութերի առաջացման աղբյուրները			Աշխատաժամերի տարեկան քանակը		Արտանետման աղբյուրի անվանումը		Աղբյուրների քանակը		Աղբյուրի կարգաթիվը	
	անվանումը	քանակը		ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ
		ՆՎ	Հ								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Ա/Հ-2											
4. Շահումյանի հանք հյուսիսային տեղամաս 4.1 Հանքուղի N9	Հանքային տեխնիկա	2		7560		Անկազմակերպ		1		B6	
4.2 Հումքի տեղա- փոխում հարստաց- ման ֆաբրիկա	Ավտոինքնաթափ մեքենաներ	1		6335		Անկազմակերպ		1		B7	
5. Հարստացման ֆաբրիկա											
5.1 Հանքաքարի պահեստ, ընդունիչ բունկեր	Ընդունիչ բունկեր	1		7030		Անկազմակերպ		1		B8	
5.2 Հանքաքարի խոշոր ջարդում	Խոշոր ջարդիչ	1		6120		Խողովակ		1		B9	
5.3 Միջին և մանր ջարդում	Ջարդիչներ	2		6120		Խողովակ		1		B10	
5.4 Ջարդված հանքաքարի սիլոսային բունկեր, բեռնում գնդավոր աղաց	Միլոսային բունկեր	1		6120		Անկազմակերպ		1		B11	
	Գնդավոր աղաց	2									

3-րդ աղյուսակի շարունակությունը

Արտադրություն արտադրամաս	Աղտոտող նյութերի առաջացման աղբյուրները			Աշխատաժամերի տարեկան քանակը		Արտանետման աղբյուրի անվանումը		Աղբյուրների քանակը		Աղբյուրի կարգաթիվը	
	անվանումը	քանակը		ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ
		ՆՎ	Հ								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
6. Կրի պատրաստման արտադրամաս 6.1 Կրի պահեստ	Կրի պահեստ	1		270		Խողովակ		1		B12	
6.2 Կրի բեռնում աղաց	Կրի աղաց	1		7870		Խողովակ		1		B13	
7. Ռեագենտների պատրաստման արտադրամաս											
7.1 Քսանթագենատի գուռեր	Գուռ	2		8640		Խողովակ		1		B14	
7.2 Համափոխանակային օդափոխության համակարգ	Օդափոխության համակարգ	1		190		Խողովակ		1		B15	
7.3 Համափոխանակային օդափոխության համակարգ	Օդափոխության համակարգ	1		190		Խողովակ		1		B16	
8. Ֆլոտացման արտադրամաս	Ֆլոտամեքենաներ	5		8640		Խողովակ		1		B17	
9. Մեխանիկական արտադրամաս 9.1 Ձուլման բաժանմունք	Ձուլման վառարան	1		260		Խողովակ		1		B18	

3-րդ աղյուսակի շարունակությունը

Արտադրություն արտադրամաս	Ադտոտող նյութերի առաջացման աղբյուրները		Աշխատաժամերի տարեկան քանակը		Արտանետման աղբյուրի անվանումը		Աղբյուրների քանակը		Աղբյուրի կարգաթիվը		
	անվանումը	քանակը									
			ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
9.2 Դարբնոցային տեղամաս	Հնոց	1		2340		Խողովակ		1		B19	
10. Փայտամշակման արտադրամաս	Փայտամշակման հաստոց	2		1012		Անկազմակերպ		1		B20	
11. Եռակցման տեղամաս	Գազային և էլեկտրական եռակցման սարքեր	2		400		Անկազմակերպ		1		B21	
12. Լաբորատորիա	Օդափոխության համակարգ	1		8160		Խողովակ		1		B22	
13. Դիզելային վառելիքի տարողություններ	Տարողություն N1-30մ <sup>3</sup>	1		8760		Անկազմակերպ		1		B23	
	Տարողություն N2-8մ <sup>3</sup>	1									
14. Դիզելային վառելիքի տարողություններ	Տարողություն N3-2.6մ <sup>3</sup>	1		8760		Անկազմակերպ		1		B24	
	Տարողություն N4-9.7մ <sup>3</sup>	1									
15. Քուկային յուղերի տարողություններ	Տարողություն N5-6մ <sup>3</sup>	1		8760		Անկազմակերպ		1		B25	
	Տակառներ -200լ	-									
Ա/Հ-3											
16. Լաբորատորիա	Ջարդիչ	2		7440		Խողովակ		1		B26	
	Տրորման սարք LM5	5									
	Տրորման սարք LM2	2									
17. Բովախառնուրդի պատրաստում	Էլեկտրական վառարան	4		5700		Խողովակ		1		B27	
	Ջարդիչ	2									
	Տրորման սարք LM5	5									
	Տրորման սարք LM2	2									
18. Քիմիական մշակում	Օդաքաշ պահարան	2		5500		Խողովակ		1		B28	

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Աղբյուրի բարձրությունը, մ		Աղբյուրի տրամագիծը, մ		Գազաօդային խառնուրդի պարամետրերն արտանետման աղբյուրի ելքում					
						արագությունը, մ/վրկ		ծավալը, մ <sup>3</sup> /վրկ		ջերմաստիճանը, °C	
ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ
11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
B1		15		3.3		18.7		160		18	
B2		2		-		1.2		8.48		15	
B3		2		-		1.2		23.5		15	
B4		2		-		1.2		23.5		15	
B5		2		-		1.2		94.2		15	
B6		2		-		1.2		376		15	
B7		2		-		1.2		9424		15	
B8		2		-		1.2		94.2		15	
B9		12		0.5		9.1		1.8		20	
B10		12		0.5		10.1		2.0		20	
B11		2		-		1.2		23.5		15	
B12		2		-		1.2		8.4		15	
B13		20		0.8		4.5		2.3		20	
B14		12		0.25		4.6		2.3		20	
B15		12		0.8		4.5		2.3		20	
B16		12		0.8		4.5		2.3		20	

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Աղբյուրի բարձրությունը, մ		Աղբյուրի տրամագիծը, մ		Գազաօդային խառնուրդի պարամետրերն արտանետման աղբյուրի ելքում					
						արագությունը, մ/վրկ		ծավալը, մ <sup>3</sup> /վրկ		ջերմաստիճանը, °C	
ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ
11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
B17		12		0.5		6.1		1.2		20	
B18		15		0.5		12.8		2.52		120	
B19		15		0.35		2.1		0.21		120	
B20		2		-		1.2		23.5		15	
B21		2		-		1.2		23.5		15	
B22		12		0.3		21.2		1.5		20	
B23		2		-		1.2		-		15	
B24		2		-		1.2		-		15	
B25		2		-		1.2		-		15	
B26		21.5		0.45		9.3		1.47		23	
B27		15		0.5		12.1		2.24		28	
B28		21.5		0.4		10.4		1.31		30	

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Կոորդինատները քարտեզ-սխեմայում, մ				Գազամաքրման սարքերի անվանումը		Մաքրման ենթակա նյութերը		Մաքրման միջին աստիճանը	
		կետային աղբյուրի, աղբյուրների խմբի կենտրոնի կամ գծային աղբ. 1-ին ծայրի		գծային աղբյուրի 2-րդ ծայրի				Ապահովվածության գործակիցը, %		Մաքրման առավելագույն չափը, %	
ՆՎ	Հ	X <sub>1</sub>	Y <sub>1</sub>	X <sub>2</sub>	Y <sub>2</sub>	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ
11	12	23	24	25	26	27	28	29	30	31	32
B1		3415	2660	-	-	Կատալիտիկ չեզոքարան		Ծխագազեր		90	
B2		2675	3750	-	-	Կատալիտիկ չեզոքարան		Ծխագազեր		90	
B3		3125	3450	-	-	-		-		-	
B4		3660	2530	-	-	-		-		-	
B5		3475	2975	-	-	Կատալիտիկ չեզոքարան		Ծխագազեր		90	
B6		2977	3112	-	-	-		-		-	
B7		2930	3140	-	-	-		-		-	
B8		2865	3077	-	-	-		-		-	
B9		2875	3045	-	-	3 ՈՐՕՄ	-	Փոշի	-	95	
B10		2884	3013	-	-	3 ՈՐՕՄ	-	Փոշի	-	95	
B11		2910	2987	-	-	-		-		-	
B12		3110	2930	-	-	-		-		-	
B13		3070	2920	-	-	-		-		-	
B14		3007	3024	-	-	Շիթափրփրայի ն գազագտիչ СПГ-7-5	-	Քսանթազենատի գոլորշի	-	87	



3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Կոորդինատները քարտեզ-սխեմայում, մ				Գազամաքրման սարքերի անվանումը		Մաքրման ենթակա նյութերը		Մաքրման միջին աստիճանը	
		կետային աղբյուրի, աղբյուրների խմբի կենտրոնի կամ գծային աղբ. 1-ին ծայրի		գծային աղբյուրի 2-րդ ծայրի				Ապահովվածության գործակիցը, %		Մաքրման առավելագույն չափը, %	
Նվ	Հ	X <sub>1</sub>	Y <sub>1</sub>	X <sub>2</sub>	Y <sub>2</sub>	Նվ	Հ	Նվ	Հ	Նվ	Հ
11	12	23	24	25	26	27	28	29	30	31	32
B15		3000	3000	-	-	-	-	-	-	-	-
B16		2992	2975	-	-	-	-	-	-	-	-
B17		2947	2990	-	-	-	-	-	-	-	-
B18		2915	2918	-	-	-	-	-	-	-	-
B19		2370	2880	-	-	-	-	-	-	-	-
B20		3030	2867	-	-	Ջրցանում	-	Փայտափոշի	-	90	-
B21		2840	2867	-	-	-	-	-	-	-	-
B22		2780	2790	-	-	-	-	-	-	-	-
B23		2963	2862	-	-	-	-	-	-	-	-
B24		2950	3250	-	-	-	-	-	-	-	-
B25		2720	2755	-	-	-	-	-	-	-	-
B26		540	584	-	-	-	-	-	-	-	-
B27		519	578	-	-	Զտիչ DF 03-24	-	Փոշի	-	98	-
B28		549	548	-	-	Արագային սկրուբեր	-	Գոլորշի	-	85	-

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Նյութի անվանումը	Աղտոտող նյութերի արտանետումները						ՍԹԱ հասնելու տարին
			ՆՎ			Հ (ՍԹԱ)			
ՆՎ	Հ		գ/վրկ	մգ/մ <sup>3</sup>	տ/տարի	գ/վրկ	մգ/մ <sup>3</sup>	տ/տարի	
11	12	33	34	35	36	37	38	39	40
N1									
B1		Հանքափոշի	0.149	0.93	4.07				
		Ածխածնի օքսիդ	0.086	0.54	2.35				
		Ածխաջրածիններ	0.026	0.16	0.705				
		Ազոտի օքսիդներ	0.0345	0.22	0.94				
		Մուր	0.0135	0.08	0.365				
		Ծմբային անհիդրիդ	0.017	0.11	0.47				
